ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 06.09.2024թ. հ. 269-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Քաղաքացի Գոհար Թենգերյանի կողմից բարձրացված հարցը՝ կապված ավտոբուսային հ.50 երթուղու 5471S հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդի կողմից ուղեվարձի վճարման գործընթացի ժամանակ ուղևորի նկատմամբ ոչ վայել պահվածքի վերաբերյալ, քննարկվել է նշված երթուղին սպասարկող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ում՝ վարորդ Թորոս Բոյաջյանի մասնակցությամբ: Վերջինս բացատրություն է ներկայացրել և հայտնել, որ պահանջել է վճարել ուղեվարձը՝ վստահ լինելով, որ ուղևորը չի վճարել և արդյունքում վիճաբանություն է տեղի ունեցել: Ընկերության անվտանգ երթևեկության բաժնի աշխատակիցները դիտել են տեսագրությունը, որից երևում է ինչպես է վարորդը ոտքի կանգնած վիճում ուղևորի հետ (տեսաձայնագրությունում վիճաբանող ուղևորը տեսանելի չէ): Արդյունքում, վերը նշված ավտոբուսի վարորդ Թորոս Բոյաջյանին հայտարարվել է նկատողություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ